

**«Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան» ծրագրի**

**Շահառուների խորհրդի 2009 թվականի սեպտեմբերի 10-ին ժամը 15:00-ին կայացած նիստի**

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 18**

**Նիստին մասնակցում էին Շահառուների խորհրդի անդամներ՝**

<b>Ասատրյան Լիլիթ</b>	«Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիա» ՀԿ
<b>Ջադրյան Կարեն</b>	«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ
<b>Նազարյան Հազարապետ</b>	«Եղեգնաձոր» ՋՕԸ
<b>Մախյան Նարինե</b>	«Փոքր և միջին բիզնեսի» հիմնադրամ
<b>Խաչատրյան Լիա</b>	«Զարգացում և ինտեգրացիա» ՀԿ
<b>Համբարձումյան Սասուն</b>	«Բաղաքացիական ծառայողների ասոցիացիա» ՀԿ
<b>Մովսիսյան Կարինե</b>	«Գորիսի Երիտասարդական Միություն» ՀԿ
<b>Տեր-Հովակիմյան Ալեքսանդր</b>	«Հայաստանի բժիշկ-ուսանողների գիտական ասոցիացիա» ՀԿ
<b>Շահինյան Պողոս</b>	«Ճանապարհային անվտանգության ազգային խորհուրդ» ՀԿ
<b>Աբրահամյան Թամարա, Անդրանիկ Վերանյանի լիազոր ներկայացուցիչ</b>	«Նոյեմբերյանի համայնքների միություն» ԻԱՄ
<b>Ղազարյան Տոնական</b>	«Շենիկ» ՋՕԸ
<b>Ոսկանյան Արման</b>	«Տավուշի զարգացման» ՀԿ

**Նիստից բացակայում էին՝**

<b>Ենգիբարյան Վիկտոր</b>	«Հայաստանի եվրոպական շարժում» ՀԿ
<b>Հովհաննիսյան Միհրան</b>	«Եղվարդ» ՋՕԸ
<b>Միքայելյան Շիրակ</b>	«Աշխատանք և հայրենիք» ՀԿ

**Նիստին մասնակցում էին նաև՝**

<b>Հովսեփյան Արա</b>	Գլխավոր գործադիր տնօրեն, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ
<b>Հակոբյան Էսթեր</b>	Համակարգող ղեկավար, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ
<b>Գրիգորյան Վիկտորյա</b>	ՇԽ օգնական
<b>Ավագյան Ռուզաննա</b>	Սախարովի անվ. մարդու իրավունքների կենտրոն ՀԿ

Նիստին մասնակցում էին նաև ՋԼՄ ներկայացուցիչներ:

Համաձայն ՇԽ Կանոնակարգի 3.12 կետի (ՇԽ նիստերը նախագահում են ՇԽ անդամները՝ ռոտացիոն սկզբունքի հիման վրա՝ ըստ ՇԽ անդամների անունների այբբենական կարգի)՝ նիստը նախագահում էր ՇԽ անդամ Սասուն Համբարձումյանը:

Նախագահողն առաջարկեց հաստատել նախօրոք ներկայացված օրակարգը՝

1. 15:00 - Ընտրական հանձնաժողովի անդամների ընտրության ընթացակարգի քննարկում, հայտերի դիտարկում
2. 15:30 - Հարցազրույց Ընտրական հանձնաժողովի անդամների թեկնածուների հետ
3. 16:30 - Ընտրական հանձնաժողովի 7 անդամների ընտրություն
4. 17:00 – ՇԽ հաշվետվության քննարկում, հաստատում  
ՇԽ հաշվետու նիստի և մամուլի ասուլիսի կազմակերպման հարցերի քննարկում
5. 17:30 - Այլ հարցեր

Օրակարգը հաստատվեց միաձայն:

### **Օրակարգի առաջին, երկրորդ և երրորդ հարցերի վերաբերյալ**

Ներկայացված տեղեկատվության համաձայն ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու համար ներկայացվել էին հետևյալ թեկնածությունները՝

1. **Հոմերոս Սաֆարյան**, «Վարդենիս» ՋՕԸ տնօրեն, 2008-2009թթ. «Ընտրական հանձնաժողովի» անդամ, «Վիստա պլյուս» կազմակերպության դասընթացավար
2. **Գայանե Արսենյան**, «ՄԱԿ-ի Հայկական ասոցիացիա» ՀԿ անդամ, 2008-2009թթ. «Ընտրական հանձնաժողովի» անդամ
3. **Գագիկ Բարսիսանյան**, «Կանաչ արահետ» ՀԿ անդամ, «Ջրից դեպի շուկա» ծրագրի շահառու
4. **Թամարա Աբրահամյան**, «Արագ» ՀԿ նախագահ, 2006-2007թթ. «Ընտրական հանձնաժողովի» անդամ, 2008թ. պարզևատրվել է ՀՄՀ-Հայաստանի ծրագրի հանրային գործընթացներում ակտիվ մասնակցության համար
5. **Տիգրան Շահինյան**, «Շահեն» ՀԿ փոխնախագահ, 2008-2009թթ. «Ընտրական հանձնաժողովի» անդամ
6. **Անյա Բալբեկյան**, «Համահայկական միջազգային երիտասարդական կենտրոն» երիտասարդական ՀԿ անդամ, «Միասին» երիտասարդական շարժման անդամ
7. **Վահագն Ասրյան**, «Սեմանտ» ՀԿ անդամ, 2008-2009թթ. «Ընտրական հանձնաժողովի» անդամ
8. **Մարինա Ղազարյան**, «Արեգ» գիտանշակության երիտասարդական ասոցիացիա ՀԿ անդամ
9. **Վահե Հայրապետյան**, «Ընդդեմ ՉԻԱՀ» ազգային ասոցիացիա ՀԿ անդամ
10. **Ալինա լալայան**, «Արարատ մարզի կանաչներ» ՀԿ նախագահ, 2008-2009թթ. «Ընտրական հանձնաժողովի» անդամ

Ընդհանուր քննարկման արդյունքում որոշվեց ընտրական հանձնաժողովի թեկնածուների հետ անցկացնել առանձին հարցազրույցներ՝ յուրաքանչյուր թեկնածուին ընձեռելով արտահայտվելու հնարավորություն: Իսկ թեկնածուներին տրվող հիմնական հարցադրումները կվերաբերեն հանրային մասնակցության և գործունեության փորձառությանը, ընտրական գործընթացներում փորձառությանը, ՀՄՀ-Հայաստանի մասին տեղեկացվածությանը և այլն:

Հանձնաժողովի անդամի թեկնածու Թ. Աբրահամյանը ինքնաբացարկ հայտնեց և առաջարկեց ՇԽ անդամներին մասնակցել նիստին որպես ՇԽ անդամ Ա. Վերանյանի լիազոր ներկայացուցիչ (Թ. Աբրահամյանը լիազորված էր փոխարինելու Ա. Վերանյանին այն դեպքերում, երբ Ա. Վերանյանը չկարողանար մասնակցել ՇԽ նիստերին):

Վերոնշյալի վերաբերյալ ՇԽ անդամների կողմից առարկություններ չեղան:

Հարցազրույցից հետո ՇԽ անդամները փոխանակեցին իրենց տպավորությունները և կարծիքները թեկնածուների վերաբերյալ: Առաջարկություն եղավ քվեարկությունը անցկացնել «բացառելու սկզբունքով», այսինքն ընտրել այն երկու թեկնածուներին, ովքեր, ավելի քիչ են համապատասխանում ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու համար՝ հաշվի առնելով ընտրական գործընթացներում և հանրային միջոցառումներին մասնակցության պակասը:

Առաջարկություն եղավ մերժել **Գագիկ Բաբախանյանի, Տիգրան Շահինյանի և Վահագն Ասրյանի** թեկնածությունները:

Առաջարկությունները դրվեցին քվեարկության և ստացվեցին հետևյալ արդյունքները՝  
մերժել Գագիկ Բաբախանյանի թեկնածությունը՝ կողմ՝ 9, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 2  
մերժել Տիգրան Շահինյանի թեկնածությունը՝ կողմ՝ 10, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 2  
մերժել Վահագն Ասրյանի թեկնածությունը՝ կողմ՝ 1, դեմ՝ 9, ձեռնպահ՝ 2:

Այսպիսով, ձայների մեծամասնությամբ որոշվեց մերժել Գագիկ Բաբախանյանի և Տիգրան Շահինյանի թեկնածությունները:

Վերջում, առաջարկություն եղավ հաստատել հանձնաժողովի ամբողջ կազմը՝

1. **Հոմերոս Սաֆարյան**, «Վարդենիս» ՋՕԸ
2. **Գայանե Արսենյան**, «ՄԱԿ-ի Հայկական ասոցիացիա» ՀԿ անդամ
3. **Ալինա Լալայան**, «Արագ» ՀԿ նախագահ
4. **Անայա Բալաբեկյան**, «Համահայկական միջազգային երիտասարդական կենտրոն» երիտասարդական ՀԿ
5. **Վահագն Ասրյան**, «Մեմանտ» ՀԿ անդամ
6. **Մարինա Ղազարյան**, «Արեգ» գիտամշակութային երիտասարդական ասոցիացիա ՀԿ
7. **Վահե Հայրապետյան**, «Ընդդեմ ՉԻԱՀ» ազգային ասոցիացիա ՀԿ

**Ընտրական հանձնաժողովի վերոնշյալ կազմը հաստատվեց 11 կողմ, 1 ձեռնպահ և 0 դեմ ձայներով:**

### **Օրակարգի չորրորդ հարցի վերաբերյալ**

ՇԽ հաշվետու նիստի և մամուլի ասուլիսի կազմակերպական հարցերի վերաբերյալ հանդես եկավ ՀՄՀ-Հայաստանի տնօրեն Արա Հովսեփյանը: Նա առաջարկեց ՇԽ հաշվետու մամուլ ասուլիսը անցկացնել ՇԽ անդամների ընտրությունների օրը՝ սեպտեմբերի 26-ին: Նա մեկնաբանեց դա նրանով, որ այդ օրը ՇԽ հաշվետվության ներկայացումը կդառնա ավելի հանրային, ընտրողների հնարավորություն կտրվի մասնակցել ժողովին, իսկ լրագրողներին՝ լուսաբանել երկու իրադարձությունները միասին:

ՇԽ մի շարք անդամներ մտահոգություն արտահայտեցին ՇԽ հաշվետու ասուլիսի և անդամների ընտրությունները նույն օրը անցկացնելու առաջարկության վերաբերյալ:

ՇԽ անդամ Լ. Ասատրյանի կարծիքով ՇԽ հաշվետվությունը պետք է նախօրոք ներկայացվի հանրությանը՝ հնարավորություն ընձեռելով հետաքրքրված կողմերին

գնահատել կատարված աշխատանքը: Լ. Ասատրյանը ներկաներին հիշեցրեց նաև, որ ՇԽ ներկա կազմից կարող են լինել անդամներ, ովքեր հետաքրքրություն կներկայացնեն մասնակցելու առաջիկա ընտրություններին, ինչը կարող է դիտարկվել որպես շահերի բախում, անհավասար պայմաններ բոլոր թեկնածուների համար:

**Քննարկման արդյունքում որոշվեց՝**

**ՇԽ հաշվետու մամլո ասուլիսը անցկացնել սեպտեմբերի 18-ին, առավոտյան ժամը 11:00-ին.**

**ՇԽ հաշվետվության ներկայացված նախագիծը ընդունել որպես հիմք և հանձնարարել զեկուցողներին այն վերջնականացնել.**

**որպես զեկուցողներ նշանակել ՇԽ անդամներ Լ. Ասատրյանին (հիմնական զեկուցող), Կ. Ջադոյանին (ԿԽ գործունեություն), Կ. Մովսիսյանին և Տ. Ղազարյանին:**

*Նախագահող՝ Ս. Համբարձումյան*

*Քարտուղար՝ Վ. Գրիգորյան*

*10-ը սեպտեմբերի, 2009թ.*